ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 հոկտեմբերի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

138
(2804)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

Ո՞Վ Է ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆԻՆ ԲԱՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՆԴԱՏԸ ՏՎԵԼ

Արցախի նախկին ԱԽ Սամվել Բաբայանը Արցախից Հայաստան տեղափոխվելուց հետո շտապել էր Հանրային հեռուստաընկերություն եւ մի շարք աղմկահարույց հայտարարություններ արել, որոնք կամ վրիպել են մեր իրավապահների աչքից, կամ էլ պարզապես ցանկություն չունեն իշխանությունների սիրելի Սամվել Բաբայանի հայտարարությունների մասով քրգործ հարուցել: Այսպիսով, Հանրայինին տված իր հարցազրույցում Սամվել Բաբայանը հայտարարել էր, թե ինքը քողարկված բանակցություններ է վարել Ադրբեջանի հետ, ավելին՝ ինչպես ինքը հայտարարեց, որոշ հարցերի շուրջ արդեն համաձայնության են եկել Ադրբեջանի հետ: «Մենք Ադրբեջանի հետ պայմանավորվել էինք ավտոնոմ ռեսպուբլիկայի շուրջ, կետ առ կետ գրած էր (23 կետ): Ադրբեջանը համաձայնել էր»,-ասել էր Բաբայանը: Նա նաեւ ասել էր, որ Արցախի 3 նախագահներն էլ պետք է կալանավորվեն. այդպես էլ արեց Բաքուն: Հետաքրքիր է, որ այս ընթացքում Բաբայանը որեւէ պաշտոն չէր զբաղեցնում ո՛չ ՀՀ-ում, ո՛չ էլ Արցախում, ուստի որեւէ իրավասություն չուներ բանակցություններ վարելու, այն էլ՝ թշնամի երկրի հետ: Հարց է առաջանում՝ ո՞վ է Սամվել Բաբայանին մանդատ տվել, որ թշնամու հետ բանակցություններ վարի, իր հարցազրույցում էլ նա չէր բացահայտել դա: Հաշվի առնելով, որ Արցախում Սամվել Բաբայանը ոչ ընդունելի եւ անհասկանալի կերպար է, դժվար թե ԱՀ իշխանությունները նրան այդ կարեւոր հարցը վստահեին, մյուս կողմից էլ՝ եթե հաշվի առնենք Նիկոլ Փաշինյանի հետ նրա մտերմությունը, թերեւս բացառվում է, որ առանց նրա գիտության Սամվել Բաբայանը բանակցություններ վարեր: «Ժողովուրդ» օրաթերթի հավաստի աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ-ական պատգամավոր Անդրանիկ Քոչարյանն է միջնորդ հանդիսացել եւ Նիկոլ Փաշինյանից երաշխիքներ ստացել, որպեսզի Սամվել Բաբայանին մանդատ տրվի՝ Ադրբեջանի բանակցություններ վարելու: Տեղեկությունը ճշտելու համար փորձեցինք կապ հաստատել Անդրանիկ Քոչարյանի հետ, որը, ինչպես միշտ, խուսափեց մեր զանգերին պատասխանելուց: ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Գագիկ Մելքոնյանն էլ, որը եւ Սամվել Բաբայանի, եւ Անդրանիկ Քոչարյանի մտերիմ ընկերն է, մեզ հետ զրույցում ասաց, որ չկա նման բան: «Անդրանիկ Քոչարյանն ու Նիկոլ Փաշինյանն ի՞նչ կապ ունեն. Սամվել Բաբայանն Արցախում է եղել, ուստի Արցախի իշխանությունների՝ Արայիկ Հարությունյանի հետ պետք է համաձայնեցներ, Անդրանիկ Քոչարյանը չէր կարող միջնորդ լինել»,-ասաց Մելքոնյանը: Փաստ է, որ Բաբայանից հետո բոլոր բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք Հակարիի կամրջով անցան, կալանավորվեցին Բաքվի կողմից:



Ազգային ժողովի նախկին պատգամավոր, այժմ Պետական եկամուտների կոմիտեի ներքին անվտանգության վարչության պետ Երջանիկ Հակոբյանի եւ նրա եղբոր՝ Ավան վարչական շրջանի ղեկավար Վահե Հակոբյանի գործերը լավացել են: Համենայնդեպս, այդ մասին են վկայում նրանց ներկայացրած պաշտոնական հայտարարագրերը: Այսպիսով, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հակոբյանը 36.7 միլիոն դրամով նորակառույց շենքում բակարան է գնել, որը գտնվում է Արաբկիր վարչական շրջանում: 2021թ.-ին նա վարկ է վերցրել 16 միլիոն դրամ: Երջանիկ Հակոբյանը 2022 թ.-ի հայտարարագրում նշել է, որ իր դրամական միջոցները կազմել են 15 հազար դոլար եւ 10 միլիոն դրամ, իսկ եկամուտը՝ 12 միլիոն դրամ (ՊԵԿ-ի աշխատավարձը): Պատգամավոր եղած ժամանակ՝ 2019 թվականին, Հակոբյանը զբաղվում էր մեքենաների առուվաճառքով: Հակոբյանը գնել է տարբեր տարիների արտադրության 3 հատ ավտոմեքենա, տարվա վերջում դրանցից երկուսը վաճառել է: Երջանիկ Հակոբյանի եղբայրը 2021 թ.-ին 3 միլիոն դրամով վաճառել է երկու տարի առաջ 2 միլիոն դրամով գնած Nissan Versa ավտոմեքենան: Նույն տարում նրա դրամական միջոցները կազմել են 10.5 միլիոն դրամ եւ 11 հազար դոլար: Մի խոսքով, գործարար եղբայրները պետական գործի են անցել, որոնց մանրամասներին կանդրադառնանք առաջիկայում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ քաղաքական իշխանությունը ՀՀ կառավարության շենքի ներսից արգելապատնեշներ է ամրացրել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ այս որոշումը կայացվել է այն բանից հետո, երբ ԱԱԾ-ն բացահայտել է, որ «Երկրապահ» կամավորական նախկին խմբի ղեկավար, ԵԿՄ նախկին փոխնախագահ Ալբերտ Բազեյանը, ինչպես նաեւ մի խումբ անձինք, իբր, փորձել են իշխանությունը յուրացնել: Այս մեղադրանքով Երեւանի նախկին քաղաքապետ Ալբերտ Բազեյանը այս պահին կալանավորված է եւ գտնվում է Նուբարաշենի բանտում: Ի դեպ, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ այսքանով ամեն ինչ չի ավարտվում. ՀՀ իրավապահ համակարգը այս օրերին ակտիվ կերպով ուսումնասիրում է սեպտեմբերի 19-ին ՀՀ կառավարության շենքի մոտ բողոքի ակցիայի մասնակիցների տեսանյութերը: Մասնավորապես, իրավապահները փնտրում են կառավարության շենքի ապակիների վրա հարձակում գործած անձանց, որպեսզի պատժեն նրանց, բայց դեռ չի հաջողվել ֆիքսել կոտրողների դեմքերը:



Երեկ տհաճ միջադեպ տեղի ունեցավ ՀՀ Ազգային ժողովում: Երբ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Աննա Մկրտչյանն իր ելույթով կշտամբեց ՔՊ-ական պատգամավորներին, որոնք լայն ժպիտներով էին ԱԺ նիստերի ողջ ընթացքում, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը վիրավորեց նրան՝ ասելով, թե սեփական փորձով էր կիսվում: Ի պատասխան՝ Աննա Մկրտչյանն ասաց. «Այ տխմա՛ր, ձայնդ կտրի՛ր»: ԱԺ նախագահը շարունակեց. «Այ չինական.. Անդաստիարակ երեւույթ ես էլի.. Ամեն մեկին բերել շպրտել են ստեղ»: Աննա Մկրտչյանն էլ ասաց. «Քեզ են շպրտել...»: Այս վիրավորանքներով լեցուն բանավեճին խառնվեց Ալեն Սիմոնյանի նախկին, շատ հարցերում նաեւ ներկա օգնական-պատգամավոր Հասմիկ Հակոբյանը՝ առաջարկելով անվտանգության աշխատակիցներին ներս հրավիրել: «Որ գրկի». սեքսիստական պատասխանով ավարտեց իր խոսքը ԱԺ նախագահը: Հիրավի, «կարեւոր» բանավեճ էր խորհրդարանական մեր երկրում՝ Հայաստանի ու արցախահայության այսօրվա մարտահրավերներին «համահունչ»: ՔՊ-ականները չեն գիտակցում իրենց պատասխանատվության չափաբաժինը:

ԶՐՈՒՅՑ

Ո՞Վ Է ՀԱՆՁՆԵԼ ԱՐՑԱԽԸ

Երեկ խորհրդարանում բանավեճ տեղի ունեցավ իշխանական եւ ընդդիմադիր գործիչների միջեւ: Մասնավորապես, ՔՊ-ականները հենց ընդդիմությանն էին մեղադրում Արցախի կապիտուլյացիան ստորագրելու համար՝ ընգծելով, որ հենց ՀՅԴ-ականներն են վերջին շրջանում այնտեղ իշխանություն ունեցել:

Այս եւ այլ հարցերի շուրջ զրուցել ենք ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանի հետ:

-Պարոն Խաչատրյան, այս օրերին, երբ ընդդիմադիր պատգամավորները իշխանության հասցեին մեղադրանքներ են հնչեցնում, թե Արցախի հարցով բանակցությունները տապալել են, որը հանգեցրել է Արցախի վերջնական կորստին, Նիկոլ Փաշինյանն ու իշխանության մի շարք ներկայացուցիչներ հակադարձում են՝ ասելով, որ Արցախում ընդդիմությանը մի քանի օրով իշխանություն են տվել (նկատի ունենալով ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանին), եւ նրանք կապիտուլյացիայի տակ են ստորագրել: Ասում են. «Այստեղ՝ Հայաստանում էլ եք իշխանություն ուզում, որպեսզի կրկին տապալեք այս ամենը»: Ինչպե՞ս կմեկնաբանեք սա:

-Հենց մեխին եք հարվածում: Նախ՝ եթե ինքը կարծում է, որ ԱԺ նախագահը, որը ընտրվել էր քաղաքական չորս ուժերի հետ կոնսուլտացիաների արդյունքում՝ ներառյալ Արայիկ Հարությունյանի քաղաքական ուժի կողմից, ունի գործառույթ ստորագրելու նման փաստաթուղթ, հավանաբար ինքն ուզում է իր վրայից նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայի փաստաթղթի ստորագրումը գցի Արարատ Միրզոյանի վրա: Դա թող իրենք երկուսով պարզեն: Ի դեպ, Արարատ Միրզոյանի հայտարարությունները, որ, օրինակ, մենք ի դեմս Ադրբեջանի չունենք գործընկեր խաղաղության գործընթացում, հակասում են Փաշինյանի հայտարարություններին, իսկ Բայրամովն էլ Արարատ Միրզոյանի «բերանը փակում է» հենց Փաշինյանի ելույթներով:

Երկրորդը՝ իսկ ինչո՞ւ է Փաշինյանը դա ասում, ո՞րն է իր թաքնված նպատակը: Այնպես չէ, որ սիրտը ցավում է Արցախի համար. եթե իր սիրտը ցավար, ինքն Արցախը չէր ճանաչի Ադրբեջանի մաս՝ չունենալով դրա օրենքը, իսկ այստեղ իր մեծամասնությունը նիստը կսկսեր՝ Արցախում զոհերի եւ օրեր առաջ Հայաստանի սահմանին զոհերի հիշատակը հարգելով:

Ինքը ի՞նչ է ուզում ասել. ասում է, որ եթե Հայաստանում լինի իշխանափոխություն, ապա կլինի պատերազմ Ադրբեջանի հետ: Ավելի պարզ ասում է, որ կամ ես կլինեմ վարչապետ, կամ Հայաստանի Հանրապետություն չի լինի: Այսինքն՝ ինքը համաձայն է լինել Ադրբեջանի կողմից վարվող խամաճիկային կառավարության ղեկավար. Հայաստանի Հանրապետությունը արդյոք նման կառավարություն ուզո՞ւմ է:

-Իսկ ՀՅԴ-ն պատրա՞ստ է Արցախում ստեղծված իրավիճակի պատասխանատվության չափաբաժինը կրել:

-Արցախի Հանրապետության նախկին նախագահը եւ Ազգային ժողովի նախագահը հրաժարական տվեցին. պե՞տք է ձեւավորվեր իշխանություն, թե՞ ոչ:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՈՐՏԵ՞Ղ Է ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ ⇨

«Ժողովուրդ» օրաթերթը երեկ կապ հաստատեց Արցախի նախկին նախագահ Արկադի Ղուկասյանի եղբոր՝ Արեգ Ղուկասյանի հետ՝ հասկանալու համար, թե արդյոք իր եղբոր, նրա գտնվելու վայրի մասին լուր ունի: Նշենք, որ այս պահին Արեգ Ղուկասյանը զբաղեցնում է Ավանի աղի կոմբինատի տնօրենի պաշտոնը:

-Պարոն Ղուկասյան, ի՞նչ տեղեկություն ունեք Ձեր եղբոր՝ Արկադի Ղուկասյանի գտնվելու վայրի մասին:

-Ես ոչ մի տեղեկություն չունեմ եղբորս մասին: Ոչ մի կապ չկա նրա հետ, տեղեկություն չունեմ՝ անվտանգ, թե վտանգավոր տեղում է գտնվում: Հեռախոսային ոչ մի կապ չկա, զրկված ենք ինֆորմացիա իմանալուց:

-Երբվանի՞ց տեղեկություն չունեք:

-Ոչ մի տեղեկություն չունեմ, ես արդեն ասացի: Երբ Ստեփանակերտում էր, ու կապ կար, այդ ժամանակ ինֆորմացիա ունեի: Հիմա բացարձակ կապ չկա, հիմա որեւէ տեղեկություն չունեմ: Հիմա փորձում ենք ինչ-որ տեղեկություն ստանալ, եւ ձեզ էլ խնդրում եմ՝ որեւէ ինֆորմացիա իմանաք, մեզ շատ կօգնեք: Այս պահին մեր հնարավորությունները շատ սահմանափակ են:

-Իսկ ի՞նչ կարծիքի եք, Ադրբեջանը Արկադի Ղուկասյանին ե՞ւս գերի կվերցնի, ինչպես դա արեց Ռուբեն Վարդանյանի, Լեւոն Մնացականյանի, Դավիթ Բաբայանի դեպքում:

-Չեմ կարող ասել, ես ցանկանում եմ՝ օր առաջ իմ եղբայրը վերադառնա Հայաստան: Ես ուրիշ ոչնչի մասին չեմ մտածում:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՈՉ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՔԱՅԼ

«Հայաստանը, ինչպես ցանկացած երկիր, որը վավերացրել է Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը, կորցնում է իրավական ինքնիշխանությունը. դա նվաստացուցիչ է»,- ասել է Ռուսաստանի Դաշնության Դաշնային խորհրդի փոխնախագահ Կոնստանտին Կոսաչովը տելեգրամյան իր ալիքում:

Հիշեցնենք, որ երեկ՝ խորհրդարանում կայացած նիստի ժամանակ, Հայաստանը վավերացրել է Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը:

«Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության վավերացումը ցանկացած պետության համար նշանակում է ոչ այլ ինչ, քան իրավական ինքնիշխանության կորուստ, որն ինքնին նվաստացուցիչ է: Այդ իսկ պատճառով իսկապես ինքնիշխան պետություններ, այդ թվում՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ն, Հնդկաստանը, Չինաստանը, Թուրքիան, Սաուդյան Արաբիա, մի՛ միացեք ՄՔԴ-ին»,- գրել է Կոսաչովը:

Նա նշել է, որ այս վավերացումը բացահայտ ոչ բարեկամական քայլ է Ռուսաստանի նկատմամբ:

«Հայաստանի խորհրդարանում չկային ուժեր, որոնք կկարողանային կասեցնել այս գործընթացը»,- ընդգծել է Կոսաչովը:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԻՋԱՆՑՔԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ Է ՏՎԵԼ

Նախիջեւանում Ալիեւի հետ ունեցած հանդիպումից հետո Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը լրատվամիջոցներին հայտնել էր, որ դեռ սեպտեմբերի 11-ին ինքը հեռախոսազրույց է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ, որը «Զանգեզուրի միջանցք»-ի հետ կապված խոստումներ է տվել: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ՀՀ վարչապետին՝ հասկանալու համար, թե երբ եւ որտեղ է խոստացել «Զանգեզուրի միջանցք»-ը, ինչ ժամկետում է խոստացել, ինչ ռիսկեր կան, եթե չկատարի եւ եթե չի խոստացել, ինչու չի հերքում: Ի պատասխան մեր հարցման՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից հետեւյալ գրությունը ստացանք. «Ի պատասխան Ձեր՝ 29.09.2023թ. գրության՝ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության տարածքով որեւէ միջանցքի գոյություն 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը չի նախատեսում: Նման բան չի նախատեսում նաեւ ՀՀ կողմից ստորագրված որեւէ փաստաթուղթ»: Էրդողանը, սակայն, պնդում էր, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը միջանցք է խոստացել, եւ դա ասում էր՝ շատ հստակ մեջբերելով սեպտեմբերի 11-ին տեղի ունեցած իրենց հեռախոսազրույցը: Ո՛չ նախկինում, ո՛չ էլ այս պատասխանով վարչապետ Փաշինյանը կամ նրա խոսնակը չեն հերքում Էրդողանին:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԸ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, համարվելով արտոնյալ հարկատու, օգտվելով մի շարք արտոնություններից, բացի տեղեկատվական ոլորտի վրա ֆինանսական միջոցներ ծախսելուց, գումարներ է ծախսում նաեւ ջրերի եւ կոնյակների գնման համար: 2023 թվականի հունվարի 1-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում ԲՏԱ նախարարությունը ջրեր ձեռք բերելու համար ծախսել է 443 հազար 300 դրամ: Նույն ժամանակահատվածում նախարարությունը 782 հազար 400 դրամ ծախսել է կոնյակներ ձեռք բերելու համար: 2018 թվականից հետո կարծես ավանդույթ է դարձել կոնյակներ, ջրեր եւ սպասքներ գնելը, ինչպես, օրինակ, դատախազության դեպքում է: Հիշեցնենք, որ ՏՏ ոլորտի շատ կազմակերպություններ համալրում են 1000 խոշոր հարկատուների ցուցակը: Այս ոլորտը ամեն կերպ ստացավ արտոնություններ, սակայն այդ ոլորտում, բացի մի քանի միջազգային մրցույթի մասնակցելուց, ոչինչ չի եղել: Չի գրանցվել ոչ մի նորարարություն, որը շրջադարձային կլինի Հայաստանի պատմության համար, ինչպես գունավոր հեռուստացույցն էր: Այս ոլորտը կա, սակայն կենդանության նշաններ ցույց է տալիս միայն արտոնություններ պահանջելու ժամանակ:

ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԸ ԿԺԱՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը երեկ հայտարարություն է տարածել, որտեղ նշվում է, թե պետք է ապահովել արցախցիների անվտանգությունն ու մարդու իրավունքները:

«Ես ուշադիր հետեւել եմ Արցախի եւ դրա շուրջ արագ փոփոխվող իրավիճակին: Ադրբեջանի վերջին ռազմական գործողություններից եւ տարածաշրջանի նկատմամբ հետագա վերահսկողությունից հետո՝2023 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ, 100.483 արցախահայեր, այդ թվում՝ ընտանիքներ, տարեցներ եւ այլ խոցելի խմբեր, լքել են իրենց տները եւ ապաստան գտնել հարեւան Հայաստանում:

Այս առումով ես ողջունում եմ Հայաստանի իշխանությունների ջանքերը՝ պաշտպանելու եւ աջակցելու բոլոր կարիքավորներին անմիջապես ՄԱԿ-ի այլ գործակալությունների եւ քաղաքացիական հասարակության աջակցությամբ: Այնուամենայնիվ, լրացուցիչ օգնություն է պահանջվում՝ համոզվելու համար, որ բոլոր անձանց կարիքները անհապաղ բացահայտվեն եւ պատշաճ կերպով լուծվեն: Ուստի, ես կոչ եմ անում Եվրոպայի խորհրդի անդամ երկրներին դրսեւորել իրենց համերաշխությունը եւ հրատապ կարգով ապահովել բոլոր անհրաժեշտ աջակցությունը:

Ադրբեջանի իշխանությունները նախաձեռնել են մի շարք քաղաքական, վարչական եւ տնտեսական միջոցառումներ՝ուղղված Ղարաբաղի տարածաշրջանի եւ այնտեղ բնակվող մարդկանց վերաինտեգրմանը: Այս առումով ես կոչ եմ անում Ադրբեջանի կառավարությանը երաշխավորել Ղարաբաղի տարածաշրջանում մնացած էթնիկ հայերի անվտանգությունն ու մարդու իրավունքների հարգումը՝ ներառյալ նրանց հավասար վերաբերմունքի եւ բռնությունից, ահաբեկումից եւ ատելությունից պաշտպանված լինելու իրավունքները:

Հատկապես պետք է պաշտպանված լինեն խոցելի խմբերը, ինչպիսիք են վիրավորները կամ առողջության կարիք ունեցող մարդիկ, տարեցները, կանայք եւ երեխաները: Շատ կարեւոր է ապահովել մարդասիրական օգնություն տրամադրողների եւ մարդու իրավունքների միջազգային առաքելությունների ազատ եւ անարգել մուտքը ներկա հանգամանքներից տուժած բոլոր տարածքներ: Այս առումով ես ի գիտություն եմ ընդունում վերջերս ՄԱԿ-ի առաքելությունը Ղարաբաղի տարածաշրջանում:

Որպես մարդու իրավունքների հանձնակատար՝ ես կշարունակեմ ձգտել ներգրավել Հայաստանի եւ Ադրբեջանի բոլոր համապատասխան զրուցակիցներին՝ իմ մանդատի համաձայն, որպեսզի կարողանամ օգնել հաղթահարելու մարդու իրավունքների առկա մարտահրավերները: Այս համատեքստում եւ Հայաստանի իշխանությունների հետ համագործակցությամբ ես շուտով կմեկնեմ Հայաստան»:

ԸՆԴՈՒՆՎԵՑ

«ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԸ»՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ հոկտեմբերի 3-ին քննարկվել է «1998 թվականի հուլիսի 17-ին ստորագրված՝ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը վավերացնելու եւ կանոնադրության 12-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Միջազգային քրեական դատարանի իրավազորությունը հետադարձորեն ճանաչելու մասին հայտարարություն ընդունելու մասին» օրենքի նախագիծը:

Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը հայտնել է, որ այս պահի դրությամբ 123 պետություն անդամակցում է Միջազգային քրեական դատարանի կանոնադրությանը: Հայաստանը Հռոմի կանոնադրությունը ստորագրել է դեռեւս 1999 թվականի հոկտեմբերի 1-ին, որից հետո վավերացման գործընթացը կասեցվել էր, քանի որ Սահմանադրական դատարանը 2004 թվականին կանոնադրությունում ամրագրված որոշ պարտավորություններ համարել էր Սահմանադրությանը հակասող:

Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչը կարծիք եւ հույս է հայտնել, որ փաստաթղթի վավերացումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ տարածքում վերոնշյալ հանցագործությունները կանխարգելելու եւ բացառելու տեսանկյունից:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ զեկուցողին հարցեր են ուղղել ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները:

Մասնավորապես՝ Բաբկեն Թունյանը հարցրել է, թե ինչ է Հայաստանին տալու փաստաթղթի վավերացումը: Հիմնական զեկուցողը պարզաբանել է, որ Հռոմի կանոնադրության վավերացումը սահմանում է դատարանի իրավազորությունը Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ: Այն որոշակիորեն երաշխիք է տալու, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ցանկացած ծանրագույն հանցագործություն ենթակա կլինի Միջազգային քրեական դատարանի իրավազորությանը, եւ այն անձանց համար, որոնք մտադրություն ունեն կատարելու նման հանցագործություն, սա առնվազն կանխարգելիչ ազդեցություն կունենա:

Պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վլադիմիր Վարդանյանի դիտարկմամբ՝ այս հարցն արդեն 20 տարի է՝ Հայաստանի արտաքին քաղաքական օրակարգում է: «Փաստաթղթի բովանդակությունը, բնույթը, արմատներն այնպիսին են, որ, կարծես թե, Հայաստանը պետք է լիներ առաջին երկիրը, որ պետք է վավերացներ այն: Այն իր արմատներով գնում հասնում է 1915 թվականի մայիսի 24, երբ Անտանտի պետությունները՝ Ռուսական կայսրությունը, Ֆրանսիան եւ Մեծ Բրիտանիան, առաջին անգամ օգտագործեցին «մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ» եզրույթը՝ Հայոց ցեղասպանությունը մեղադրելու համար: Այս փաստաթուղթն է առաջին անգամ պատմության մեջ ամրագրում կոնսոլիդացված տեսքով, թե որոնք են մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները: Այս հարցով ՄԱԿ-ը սկսել է զբաղվել 1946-47 թվականներին: Ստատուտը որեւիցե բովանդակային քրեական արարք չի նախատեսում: Այն պարզապես ամրագրում է այն բոլոր արարքները, որոնք աշխարհի գրեթե բոլոր պետությունների օրենսդրության մեջ ամրագրված են՝ ցեղասպանություն, ռազմական հանցագործություններ, մարդկայնության դեմ ուղղված հանցագործություններ»,- ասել է հանձնաժողովի նախագահը՝պարզաբանելով, թե ինչու է հարցը քննարկվում այս պահին:

«Այն հանգամանքը, որ ՀՀ տարածքում է գտնվում էթնիկ զտման՝ մարդկայնության դեմ ուղղված հանցագործության արդյունքում բռնի տեղահանված անձերի ստվար խումբ, հիմք է տալիս, որ Հայաստանը Միջազգային քրեական դատարանում կարող է պնդել, որ վերջինս ունի իրավազորություն այս արարքի նկատմամբ»:

Նախագիծը քննարկվել է գլխադասային հանձնաժողովի նիստում՝արժանանալով դրական եզրակացության:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ պատգամավորներն իրենց ելույթներում անդրադարձել են Միջազգային քրեական դատարանին Հայաստանի անդամակցության դրդապատճառներին:

Խորհրդարանը 60 կողմ, 22 դեմ ձայնով ընդունել է օրենքի նախագիծը: ԱԺ «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» ընդդիմադիր խմբակցությունները դեմ են քվեարկել:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՊԱՀԱՆՋԸ

Թուրքական լրատվամիջոցները հայտնում են ,որ Թուրքիան պահանջում է փակել հայկական Մեծամորի ատոմակայանը, որը գտնվում է Թուրքիայի հետ սահմանից 16 կիլոմետր հեռավորության վրա:

Թուրք պաշտոնյաները նշում են, որ դա պայմանավորված է այն ռիսկերով, որ շուտով կլրանա կայանի ծառայության ժամկետը:

Դիմումում նշվում է, որ Մեծամորի ատոմակայանը վերահսկվում է Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ՄԱԳԱՏԷ) կողմից:

ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ

Ռուսական խաղաղապահ զորակազմի հրամանատարությունն Արցախի տարածքում առաջադրանքների կատարման համար աչքի ընկած զինծառայողներին պարգեւատրել է Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության գերատեսչական պարգեւներով եւ տարբերանշաններով:

«Ներկայումս ռուս խաղաղապահները շարունակում են իրականացնել Լեռնային Ղարաբաղի տարածքում իրադրության շուրջօրյա մշտադիտարկում եւ Բաքվի ու Ստեփանակերտի հետ շարունակական փոխգործակցություն՝ ուղղված արյունահեղության կանխմանը, անվտանգության ապահովմանը եւ խաղաղ բնակչության նկատմամբ մարդասիրական իրավունքի նորմերի պահպանմանը: Ռուսական խաղաղապահ զորախումբը շարունակում է ապահովել Արցախի տարածքից ինքնուրույն դուրս եկող խաղաղ բնակիչների քաղաքացիական մեքենաների երթեւեկության անվտանգությունը»,- հայտում են ՌԴ ՊՆ-ից:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՇՏ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Ֆինլանդիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Կիրստի Նարինեն գրառում էր արել՝ մեղադրելով Ադրբեջանին Ղարաբաղից հայերի բռնի տեղահանման համար, որին էլ ի պատասխան՝ Ադրբեջանի արտաքին գործերի մամուլի խոսնակ Այխան Հաջիզադեն ասել է. «Ադրբեջանը երբեք չի հետապնդել հայ բնակիչներին: Ընդհակառակը, կար ապահով միջավայր նրանց վերաինտեգրման համար: Հայաստանն է բազմաթիվ վայրագություններ իրականացրել ադրբեջանցիների նկատմամբ»:

ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը նշել է, որ այդ փաստը հաստատել է Ղարաբաղ այցելած ՄԱԿ-ի առաքելությունը:

ՇՈՅԳՈՒԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն հայտարարել է Արցախի ավելի քան 98 հազար խաղաղ բնակչի ճամբարում տեղավորելու մասին: Նրա խոսքով՝ զոհեր թույլ չտալու համար որոշվել է քաղաքացիական անձանց տարհանել եւ տեղավորել դիտակետերում եւ բազային ճամբարում:

Շոյգուն հայտնել է, որ հակամարտության սրման պայմաններում ռուսական խաղաղապահ զորախումբը շարունակել է կատարել իր վրա դրված խնդիրները: «Մեր խաղաղապահներին շնորհակալություն եմ հայտնում անձնուրաց եւ պրոֆեսիոնալ գործողությունների համար, որոնք օգնեցին խուսափել ավելի շատ զոհերից»,- հայտարարել է նա:

Նրա խոսքով՝ ռուս զինծառայողները մասնակցել են Ստեփանակերտի վառելիքի պահեստում բռնկված հրդեհի մարման աշխատանքներին, տուժածներին եւ կարիքավորներին բազմակողմանի բժշկական օգնություն ցուցաբերել:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ

2023 թվականի հոկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության եւ «ԱՕԿՍ» ՍՊ ընկերության բաժնետերերի միջեւ կնքված հաշտության համաձայնությունը հաստատվեց Վարչական դատարանի կողմից:

Աբովյան 3 հասցեում գտնվող 526.9 քմ շենքի (հանրության շրջանում հայտնի «ԱՕԿՍ»-ի շենքի) եւ 0,0467 հա մակերեսով հողամասի սեփականության իրավունքը վերադարձվեց Հայաստանի Հանրապետությանը:

Հիշեցնենք, որ Գլխավոր դատախազությունը, պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու լիազորության շրջանակում, 2022 թվականի նոյեմբերի 18-ին Հայաստանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում ընդգրկված Աբովյան 3 հասցեի շենքը Հայաստանի Հանրապետությանը վերադարձնելու նպատակով հայց էր հարուցել Վարչական դատարան:

Հայց հարուցելու հիմքում դրվել էր այն հանգամանքը, որ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության մինիստրների սովետի՝ 1955 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 699 կարգադրությամբ՝ Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի՝ «ԱՕԿՍ»-ի հաշվեկշռին հանձնվել էր գույք, այդ թվում՝ Աբովյան 3 հասցեի շենքը:

Հետագայում՝ 1992 թվականի հուլիսի 30-ին, ստեղծվել էր «Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության հայկական ընկերություն» կազմակերպությունը, որը, առանց օրինական հիմքերի, հանդես է եկել որպես Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի կոմիտեի իրավահաջորդ եւ 2001 թվականին, ներկայացնելով իր ստեղծումից շուրջ 37 տարի առաջ ընդունված վերոհիշյալ կարգադրությունը, ստացել էր «ԱՕԿՍ»-ի շենքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայական:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ Գլխավոր դատախազությունը Վարչական դատարան ներկայացված հայցով պահանջում էր անվավեր ճանաչել Կադաստրի կոմիտեում Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապի եւ համագործակցության հայկական ընկերության՝ 2001 թվականի հուլիսի 3-ին եւ «ԱՕԿՍ» ՍՊ ընկերության անվամբ 2011 թվականի նոյեմբերի 25-ին կատարված իրավունքի պետական գրանցումները:

Հայցադիմումը Վարչական դատարան էր մուտքագրվել 2022 թվականի նոյեմբերի 22-ին:

2023 թվականի սեպտեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության եւ «ԱՕԿՍ» ՍՊ ընկերության բաժնետերերի միջեւ կնքվել էր հաշտության համաձայնություն: Համաձայնությունը նույն օրը մուտք էր արվել Վարչական դատարան:

Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանի ապօրինի մասնավորեցման վերաբերյալ քննվող քրեական վարույթով նախաքննությունը Ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում շարունակվում է:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԳԱԼԵՅԱՆԸ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ 44-օրյա պատերազմի հերոս Մխիթար Գալեյանի հորը՝ Գարիկ Գալեյանին, «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկից տեղափոխել են «Աստղիկ» բժշկական կենտրոն, որտեղ նրան հետազոտել են եւ ասել, որ կրկին հետազոտման անհրաժեշտություն է առկա: Նշենք, որ սեպտեմբերի 9-ին դատարանը բավարարել էր Գարիկ Գալեյանին կալանավորելու միջնորդությունը:

Վերջինիս փաստաբան Վահան Հովհաննիսյանի պնդմամբ՝ կալանքն անթույլատրելի է, քանի որ Գալեյանն ունի պատժի եւ կալանքի կրմանը խոչընդոտող 3 հիվանդություն: Դատարանի որոշումը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան:

Քննչական կոմիտեն տեղեկացրել էր, որ Գալեյանի անձնական խուզարկությամբ վերջինիս մոտ հայտնաբերվել եւ վերցվել է պոլիէթիլենային տոպրակ, որի մեջ առկա է եղել 3 միանման պոլիէթիլենային փաթեթ՝ համապատասխանաբար 1.59 գրամ, 1.51 գրամ եւ 1.60 գրամ ընդհանուր քաշերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի նմանվող յուրահատուկ հոտով դեղնականաչավուն զանգվածներով:

Ոստիկանության փորձագիտական կենտրոնից ստացված եզրակացության համաձայն՝ նրա մոտ հայտնաբերված նյութը հանդիսանում է «Մարիխուանա» տեսակի թմրամիջոց:

ՀԱՐՎԱԾԵԼ Է ՄԱՏՈՒՑՈՂԻՆ

Հոկտեմբերի 1-ին՝ ժամը 22:00-ի սահմաններում, «Գինետուն» ռեստորանային համալիրում աշխատանքային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ բարմենը խոհանոցային դանակով հարվածել է մատուցողին:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այդ ամենի արդյունքում ռեստորանում սկսվել է իրարանցում: Մատուցողին շտապ տեղափոխել են հիվանդանոց, որտեղ բժիշկները պարզել են, որ նա հարվածը ստացել է գոտկատեղի հատվածում:

Բժիշկները վիրահատել են մատուցողին, վիճակը գնահատվում է նորմալ:

ՀԱՓՇՏԱԿԵԼ ԵՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Թամարա Վլադիկի Պողոսյանին մեղադրանք է առաջադրվել:

Մասնավորապես, նա 2021 թվականին խարդախությամբ «Ջինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցում» հիմնադրամից հափշտակել է 4 մլն 100 հազար ՀՀ դրամ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

ԽՈՒՍԱՓԵԼ Է ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

Պաշտպանության բանակի N զորամասի (դիվիզիայի) հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ, գնդապետ Մ.Բ.-ն 2020 թվականի հոկտեմբերի 3-ին, աջ ծնկահոդի շրջանում վնասվածք ստանալու պատճառաբանությամբ, դիմել է Հադրութի շրջանի Տող գյուղում ծավալված Մեխակավանի զինվորական հոսպիտալ: Մ.Բ.-ի աջ ծնկահոդի հատվածում հայտնաբերվել է միայն այտուց, տեղադրվել է ֆիքսատոր հոդի շարժունակությունը սահմանափակելու նպատակով:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են դատախազությունից, վերադաս հրամանատարության կողմից Մ.Բ.-ին հանձնարարվել է շարունակել զինվորական ծառայության պարտականությունների կատարումը, մասնավորապես՝ Հադրութ քաղաքում գտնվող անձնակազմի հետ իրականացնել բարոյահոգեբանական աշխատանքներ: Գիտակցելով, որ առկա չէ իր առողջական վիճակով պայմանավորված զինվորական ծառայության պարտականությունների կատարումը դադարեցնելու հնարավորություն՝ Մ.Բ.-ն մարտական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած լինելու պատրանք ստեղծելու նպատակով աջ ծնկահոդի այտուցված հատվածը բազմակի մշակել է յոդ տեսակի հեղուկով, վիրակապել նույն հեղուկով խիտ թաթախված բինտով՝ աջ ծնկային հոդի շրջանում առաջացնելով 2-րդ աստիճանի այրվածք:

2020 թվականի հոկտեմբերի 10-ին՝ ժամը 11:00-ից մինչեւ 12:00-ն ընկած հատվածում՝ դիվիզիայի հրամանատարական կետի տեղափոխման ժամանակ, հակառակորդի կողմից հրետակոծության է ենթարկվել Մ.Բ.-ին ու համածառայողին տեղափոխող ավտոմեքենան: Հրետակոծության հետեւանքով բեկորային վիրավորում է ստացել միայն վարորդը: Նույն ավտոմեքենայում գտնված, մարմնական որեւէ վնասվածք չստացած Մ.Բ.-ն, օգտագործելով այն հանգամանքը, որ ոչ ոք տեղեկություն չունի իր վիճակի մասին, անձնակազմին տեղեկացրել է, թե, իբր, հրետակոծության արդյունքում վիրավորում է ստացել:

Մ.Բ.-ի վարքագծի հիման վրա՝ համածառայողները վերջինիս ուղարկել են «Հադրութի շրջանի բուժական միավորում» ՓԲԸ, իսկ 2020 թվականի հոկտեմբերի 10-ին Մ.Բ.-ն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

2023 թվականի սեպտեմբերի 27-ին Մ.Բ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ռազմական դրության ժամանակ խաբեության եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու համար:

2023 թվականի սեպտեմբերի 29-ին դատախազը հաստատել է մեղադրական եզրակացությունը եւ վարույթի նյութերի հետ հանձնել Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 2-ից 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 61 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարած:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԵԿ ՏԱՐՈՎ ՓԱԿ ԹՈՒՆԵԼ

Տավուշի մարզպետարանը հայտարարություն է տարածել, որտեղ նշված է, որ Մ-4, Երեւան-Սեւան-Իջեւան ՀՀ պետական սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի՝ Սեւանի լեռնանցքի թունելի (Դիլիջանի թունել) հիմնանորոգման նախագծային աշխատանքներով պայմանավորված՝ ժամանակավորապես դադարեցվելու է ճանապարհային երթեւեկությունը Սեւանի լեռնանցքի թունելով սույն թվականի հոկտեմբերի 2-ից մինչեւ հոկտեմբերի 6-ը՝ ժամը 22:00-ից մինչեւ 06:00-ն: Պատճառվող անհարմարության համար մարզպետարանը հայցել է երթեւեկության մասնակիցների ներողամտությունը: Հավաստի աղբյուրից տեղեկացանք, որ ընթացիկ տարվա դեկտեմբերի վերջից մեկ տարի ժամանակով Դիլիջան-Սեւան ավտոմոբիլային թունելը փակելու են, որպեսզի թունելի վերանորոգում, ամրացում կատարեն: Երթեւեկը կկատարվի Սեմյոնովկա-Ծովագյուղ շրջանցիկ ճանապարհով, ինչը 30- 40 րոպե կերկարացնի երթեւեկի տեւողությունը: Մասնագետները տարօրինակ են համարում վերանորոգումը ձմռան կեսին սկսելը, նրանք կանխատեսում են, որ հաճախ մերկասառույցով պատվող Դիլիջանի բարձրադիր ոլորաններում՝ Սեմյենովկա գյուղում, կլինեն մեծ թվով ավտովթարներ, ճանապարհի խցանումներ:

ԴԱՏԻ ԵՆ ՏՎԵԼ

Իջեւան համայնքը, ընդդեմ «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ի, Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան հայցադիմում է ներկայացրել նախկին վիճակի վերականգնման՝ ինքնակամ կառույցի քանդման եւ արդյունքում պատճառված վնասի հատուցման պահանջներով: Դատավոր Նարինե Անանյանը հայցը դատարանի վարույթ է ընդունել, Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի նստավայրում այդ հայցով հերթական նիստը նշանակված է նոյեմբերի 16-ին: «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ն պատկանում է գործարար, «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ Խաչատուր Քոքոբելյանի ընտանիքին: 2020թ. մայիսի 10-ին Տավուշի մարզի Խաչթառակ գյուղի բնակիչները փակել էին միջպետական ճանապարհը՝ բողոքելով Ազգային ժողովի նախկին պատգամավոր Խաչատուր Քոքոբելյանի ընտանիքին պատկանող «Կոկ Սիստեմ» ՍՊԸ-ի «Կոկ» փոքր ՀԷԿ-ի գործունեության դեմ. այդ փոքր ՀԷԿ-ի գործունեության հետեւանքով հեղեղվել էր «Հեքիաթ» հանգստյան գոտու տարածքը: Հավանաբար, Իջեւանի համայնքապետարանի հայցն առնչվում է այդ փոքր ՀԷԿ-ի ջրահավաք ավազանի կառուցման ընթացքում ինքնակամ կառույցի շինարարությանը: Այդ մասին Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել, դեռ պատասխան չի ստացվել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԹԵՐՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Հարկային օրենսգրքում նախատեսվող փոփոխությունների հիմնական ուղղությունները երեքն են՝ առաջինը՝ գործարքը հիմնավորող թղթային եղանակով դուրս գրվող փաստաթղթերի էլեկտրոնային եղանակով դուրս գրելու ամրագրումը, երկրորդը՝ փաստաթղթավորման պահանջների նկատմամբ հարկային հսկողության գործիքակազմի արդյունավետության բարձրացումն ու պատասխանատվության ամրագրումը, եւ վերջինը՝ գույքի վարձակալության գործարքներ իրականացնող, սակայն հարկերը չհայտարարագրող ֆիզիկական անձանց նկատմամբ պատասխանատվության միջոցների սահմանումը: Այս մասին հոկտեմբերի 3-ին՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի զեկուցման ժամանակ՝ ԱԺ հերթական նիստի ընթացքում, ասել է ՊԵԿ նախագահի տեղակալ Կարեն Թամազյանը:

Նախագծով առաջարկվում է սահմանել, որ ապահովագրական գործակալները եւ ապահովագրական բրոքերները չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ կամ միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ: Զեկուցողը նշել է, որ հարկային մարմինը չափագրումներ կարող է իրականացնել նաեւ ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

«Հաշվի առնելով հարկային մարմնին բացառապես էլեկտրոնային եղանակով հաշվարկային փաստաթղթերի եւ տեղեկությունների ներկայացման անհրաժեշտությունը՝ դեռեւս թղթային եղանակով կազմվող հաշվարկային փաստաթղթերի դուրս գրումը եւ դրամարկղային գործառնությունների հաշվառման նպատակով դրամարկղային գրքերի վարումը նույնպես կկատարվի էլեկտրոնային եղանակով: Շրջանառության հարկ վճարողների մոտ ապրանքների (բացառությամբ հումքի, նյութերի, հիմնական միջոցների եւ արտարժույթի) ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման պահանջները չպահպանելու դեպքում կսահմանվի տուգանք՝ այդ ապրանքների ձեռք բերման գնի 20 տոկոսի չափով: Նույն խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում տուգանքը կկազմի ապրանքների ձեռք բերման գնի 50 տոկոսի չափ»,- նշել է ՊԵԿ փոխնախագահն ու հավելել, որ պատասխանատվություն կսահմանվի նաեւ այն դեպքում, երբ անշարժ գույքի վարձակալության գործարքից ծագող իրավունքները չեն ստանա պետական գրանցում:

Կարեն Թամազյանի հավաստմամբ՝ նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է նվազեցնել շրջանառության հարկ վճարողների իրացման շրջանառությունների թերհայտարարագրման հնարավոր ռիսկերը՝ իրականացնելով արդյունավետ հարկային վարչարարությունը, կարգավորել ապրանքների ձեռք բերման փաստաթղթավորման պահանջների նկատմամբ հսկողություն իրականացնելու հետ կապված հարցերը, դրամարկղային գործառնությունների հաշվառման նպատակով դրամարկղային գրքերի վարումը կատարվելու է էլեկտրոնային եղանակով, խրախուսել գույքի վարձակալության հանձնելու պայմանագրի գրանցումը, որի արդյունքում կնվազի գույքի վարձակալության ոլորտում առկա ստվերը:

Օրենքի նախագծի ընդունման պարագայում կարգավորումներն ուժի մեջ կմտնեն 2025 թվականի հունվարի 1-ից:

Հարակից զեկույցով հանդես է եկել Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ծովինար Վարդանյանը: Նա տեղեկացրել է խորհրդարանականներին, որ հարցը քննարկվել է հանձնաժողովում ու ստացել դրական եզրակացություն:

ԱՐՁԱԳԱՆՔ

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԴԱՎԱՃԱՆԵՑ ԱՐՑԱԽԻՆ

«Ռուսաստանը չի աղահովել խաղաղությունն ու անվտանգությունը Արցախի շուրջ»,- հայտարարել է Եվրախորհրդարանի նախագահ Շառլ Միշելը Euronews-ին տված հարցազրույցում: Շառլ Միշելը սա անվանեց «դավաճանություն» հայ ժողովրդի նկատմամբ:

Եվրամիության խորհրդի նախագահը կարծում է, որ Ռուսաստանը դավաճանել է էթնիկ հայերին: «Դաս պետք է քաղել Ադրբեջանի հետ հակամարտությունից, որը ռազմական գործողության ընթացքում Լեռնային Ղարաբաղը վերադարձրեց իր վերահսկողությանը», - նշել է նա:

«Իրավիճակը պարզ է. ոչ ոք չի կարող դա չտեսնել, որ Ռուսաստանը դավաճանել է հայ բնակչությանը: Ռուսաստանը ցանկություն է հայտնել, որ իր զինվորները ներկա գտնվեն այնտեղ եւ երաշխավորեն կայունության եւ անվտանգության վերաբերյալ համաձայնագրերը: Եվ մենք տեսնում ենք, որ այս ռազմական գործողությունը սկսվեց առանց ասպարեզում գտնվող Ռուսաստանի կողմից նվազագույն արձագանքի՝ ի տարբերություն Եվրամիության, որն այնտեղ ռազմական ներկայություն չունի, ինչպես գիտեք», - հավելեց նա:

Շառլ Միշելն ասել է, որ մտադիր է միջնորդություն առաջարկել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ այս շաբաթվա վերջին Իսպանիայի Գրանադա քաղաքում կայանալիք Փաշինյան-Ալիեւ հանդիպման ժամանակ:

Հունվարի 1-ից Արցախի Հանրապետությունը կդադարի գոյություն ունենալ. հարցին, թե ինչպես կարելի է վստահություն ստեղծել այս պայմաններում, Եվրախորհրդարանի նախագահը պատասխանել է. «Կարծում եմ, որ Ադրբեջանը մեծ պատասխանատվություն ունի այն պահից, երբ սկսեց ռազմական գործողությունը: Այժմ Ադրբեջանը պետք է բարի կամք դրսեւորի միջազգային հանրությանը ներգրավի իրավիճակի մոնիթորինգին, որպեսզի պաշտպանվեն Ադրբեջանում ապրող ողջ բնակչության, այդ թվում՝ հայ բնակչության իրավունքներն ու անվտանգությունը»:

Բրյուսելի եւ Բաքվի հարաբերությունները մնում են բարդ, բայց խոստումնալից: Անցյալ տարի Եվրամիությունը շատ բան արեց Ադրբեջանից ավելի շատ բնական գազ ստանալու համար:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 8 ՃՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԾԱՐՈՒՆԱԿԵՆ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 2784 երեխա հոկտեմբերի 3-ի դրությամբ ընդգրկվել է Հայաստանի Հանրապետության կրթական հաստատություններում:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին հոկտեմբերի 3-ին՝ «Հումանիտար կենտրոն»-ում կայացած ասուլիսին, հայտնեց Հայաստանի վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը:

«Ըստ մարզերի բաշխվածությունը հետեւյալն է՝ Արագածոտն՝ 80, Արարատ՝758, Արմավիր՝393, Գեղարքունիք՝ 91, Կոտայք՝450, Լոռի՝103, Շիրակ՝110, Սյունիք՝ 140, Տավուշ՝ 161, Վայոց ձոր՝ 46, Երեւան՝450»,- մանրամասնեց նա:

Բաղդասարյանը տեղեկացրեց՝ կարեւորվում է նաեւ ԼՂ-ից տեղահանվածների զբաղվածության հարցը: Հիշեցրեց՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը գործարկել է Workforall.am կայքը, որտեղ շուրջ 4500 թափուր աշխատատեղ կա:

Բաղդասարյանը ներկայացրեց՝ մարզերում առկա է 273 ավագ բուժաշխատողի եւ 59 միջին բուժաշխատողի թափուր հաստիք: Կրթական ոլորտում Հայաստանի մարզերում եւ Երեւանի դպրոցներում այս պահի դրությամբ 1035 թափուր հաստիք կա:

Ադրբեջանը սեպտեմբերի 19-ից Լեռնային Ղարաբաղի դեմ լայնածավալ հարձակում էր սկսել՝ թիրախավորելով նաեւ քաղաքացիական ենթակառուցվածքներ, խաղաղ բնակիչներին: Ջոհվել եւ վիրավորվել էին նաեւ քաղաքացիական անձինք: Սեպտեմբերի 20-ին ԼՂ իշխանություններն ընդունեցին ռուսական խաղաղապահ առաքելություն իրականացնող զորակազմի հրամանատարության առաջարկությունը՝ կրակի դադարեցման վերաբերյալ: Վերջին օրերին Լեռնային Ղարաբաղից ՀՀ են տեղափոխվում բռնի տեղահանված քաղաքացիներ: Լեռնային Ղարաբաղից հոկտեմբերի 3-ի ժամը 12:00-ի դրությամբ Հայաստան է տեղափոխվել բռնի տեղահանված 100 հազար 617 անձ:

Հրապարակային ծանուցման փոփոխություն

Ի փոփոխություն «Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Ժողովուրդ» օրաթերթի 24.08.2023թ. թիվ 117 (2783) համարի 6-րդ էջում տպագրված «Հրապարակային ծանուցման», տեղեկացնում ենք, որ «Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ի կողմից կազմակերպված, «Էլեկտրոն» ԲԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ, ք. Երեւան, Շենգավիթ, Շարուրի փողոց, 37/37 հասցեում գտնվող անշարժ գույքի աճուրդային փուլերը 09.10.2023թ.-ից շարունակվելու են 742086000 ՀՀ դրամ մեկնարկային գնով՝ «Հրապարակային ծանուցման» մեջ նշված ընթացակարգով:

Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011)526185 հեռախոսահամարով կամ այցելել www.flores.am կայք:

«Հրապարակային ծանուցման» մյուս դրույթները մնում են անփոփոխ:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ «Հումանիտար կենտրոն»-ում կայացած ասուլիսում Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյանը, խոսելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին ՀՀ կառավարության «Հումանիտար կենտրոն»-ի կողմից ցուցաբերվող աջակցության աշխատանքների ընթացքից, հայտնեց, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված չափահաս անձանց 75 տոկոսն ունի բանկային քարտ, որոնք կնույնականացվեն կենտրոնացված կարգով, եւ քարտերին կփոխանցվի հասանելիք գումարը:

«Մենք աշխատելու ենք այնպես, որ վերջին 15 ամսվա ընթացքում ակտիվ գործարքներ իրականացված քարտերին փոխանցվի գումարը: Դա կլինի տվյալ քաղաքացու համար գումարների ստացման ամենահարմար եղանակը: Քաղաքացիները կարող են մոտենալ սպասարկող բանկոմատին գումարը կանխիկացնելու, վճարումներ կատարելու համար: Սակագները կարող են տարբեր լինել, սակայն առեւտրային բանկերը կանեն այնպես, որ կանխիկացումներն իրենց բանկոմատներում անվճար լինեն: Եթե նույնիսկ պարզվի, որ գործող քարտ կա հաճախորդի մոտ, բայց քարտը կորել է, նա կարող է մոտենալ բանկ, բանկի սպասարկող սրահից կանխիկով վերցնել իրեն հասանելիք գումարը կամ դիմում գրել եւ վերաթողարկել քարտը»,-նշեց Խաչատրյանը:

Անդրադառնալով այն քաղաքացիներին, որոնք քարտեր չունեն՝ ԿԲ նախագահի տեղակալն ընդգծեց՝ նման անձանց համար բանկերը կիրականացնեն անվճար սպասարկում ինչպես քարտերի տրամադրման, այլնպես էլ իրենց բանկոմատներում կանխիկացման վճարումների հետ կապված անվճար ծառայություններ:

Խոսելով անհրաժեշտ փաստաթղթերից՝նա շեշտեց, որ անձը պետք է ունենա անձը հաստատող փաստաթուղթ, ցանկալի է՝ անձնագիր եւ հանրային ծառայության հաշվեհամար: «ՀԾՀ-ի ներկայացումը միայն փաստաթղթերի ամբողջականության հարց չէ, այն շատ կարեւոր է, որովհետեւ ՀՀ կառավարությունը նույնականացնում է քաղաքացիներին, որոնք պետք է վճարում կատարեն հենց ՀԾՀ-ի միջոցով: Այն քաղաքացիները, որոնք կունենան ՀԾՀ վկայող որեւէ փաստաթուղթ կամ տեղեկանք, կօգտագործվի դա, իսկ չունենալու պարագայում, անձնագրի տվյալների հիման վրա, կենտրոնացված բազայից բանկերի կողմից վեր կհանվեն այդ հանրային ծառայության համարանիշները, եւ այդ միջոցով քարտեր կթողարկվեն»,-տեղեկացրեց Խաչատրյանը:

Նրա խոսքով՝ քարտերի թողարկվելուց հետո քաղաքացիները դրանց վերաբերյալ տեղկատվությունը պարտադիր չէ, որ ներկայացնեն կառավարությանը: Կենտրոնացված կարգով կառավարություն կներկայացվեն քաղաքացիների նոր բացված քարտերի տվյալները, եւ փոխանցումները կիրականացվեն:

«Նախնական տվյալներով՝ միանվագ գումար կփոխանցվի այն քաղաքացիներին, որոնք ունեն գործող քարտեր, իսկ ում քարտերը նոր կբացվեն, պարբերական եղանակով, շաբաթական կտրվածքով կարվեն վճարումներ անմիջապես քարտը տրամադրելուց հետո: Քարտերի տրամադրումը սովորաբար 2-3 աշխատանքային օր է տեւում»,-ասաց Հովհաննես Խաչատրյանը:

Նա կոչ արեց դիմել ՀՀ գործող բոլոր բանկերին, բացառությամբ «Մելլաթ» եւ «Ֆասթ» բանկերի, քանի որ դրանք քարտային ծառայություններ չեն մատուցում: «Մենք հանրապետության ողջ տարածքում մասնաճյուղեր ունենք: Ենթադրում եմ, որ մարդկանց հարմար կլինի իրենց մոտ գտնվող բանկ այցելել: Մարզերում ունենք 269 մասնաճյուղ»,- եզրափակեց Հովհաննես Խաչատրյանը:

ԱՐՑԱԽՑԻՆԵՐ

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ԿՍՏԱՆԱՆ

Հայաստանում զինծառայող չհանդիսացող, բայց զինծառայության մեջ գտնվող անձանց ընտանիքները եւս պետք է փոխհատուցում ստանալու հնարավորություն ունենան պետական վճարների միջոցով: Այս մասին Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի փոխհատուցման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ մտցնելու մասին օրինագծի քննարկման ժամանակ՝ հոկտեմբերի 3-ին, հայտնել է պաշտպանության փոխնախարար Արման Սարգսյանը:

Փոխհատուցումը, մասնավորապես, կվճարվի ընտանիքներին վերոնշյալ անձանց մահվան կամ վիրավորվելու դեպքում:

Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված քաղաքացիական ծառայողների (որոնք ժամանակավորապես զբաղեցրել են թափուր պաշտոններ) ընտանիքները աջակցություն կստանան Զինծառայողների կյանքի եւ առողջության ապահովագրման հիմնադրամից:

Նրա խոսքով՝ 2022թ. ադրբեջանական ագրեսիայի ժամանակ եղել են դեպքեր, երբ թափուր զինվորական պաշտոնների են նշանակվել քաղաքացիական անձինք: Նրանք կատարել են տեխնիկական աշխատանք: Մարտերի ընթացքում նրանցից ոմանք զոհվել են:

Փոխնախարարը նշել է՝ օրենքի բացը թույլ չի տալիս նրանց ներառել հիմնադրամի շահառուների ցուցակում, իսկ նրանց ընտանիքներին՝ ստանալ աջակցություն: Այս նախագիծը, ենթադրվում է, պետք է լուծի այս խնդիրը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՈԼԵՋՆԵՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին ԿԳՄՍՆ-ից տեղեկացնում են, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների կրթության կազմակերպման նպատակով Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը շրջաբերական գրություն է ուղարկել ուսումնարանների եւ քոլեջների տնօրեններին:

Համաձայն շրջաբերականի՝ համապատասխան կամ հարակից մասնագիտությամբ՝ լիցենզիայով սահմանված ազատ տեղերի բացակայության դեպքում ուսանողի բնակության վայրի ամենամոտ ուսումնական հաստատությունում կրթությունը կարող է կազմակերպվել՝ գերազանցելով տվյալ մասնագիտությամբ լիցենզիայով հատկացված տեղերի թիվը, եթե համընկնում է ուսանողի ուսումնառած մասնագիտության հետ: Ուսանողն այս դեպքում կարող է ընտրել նաեւ այլ համայնքում կամ մարզում գործող ուսումնական հաստատություն:

«Ուսանողի ուսանողական իրավունքի վերականգնման մերժման հիմք չի կարող հանդիսանալ վերականգնման կարգի պահանջներով անհրաժեշտ փաստաթղթերի բացակայությունը: Ուսանողի դիմումն ընդունելուց հետո անհրաժեշտ է նրան թույլատրել մասնակցելու ուսումնական գործընթացին եւ հնարավորինս սեղմ ժամկետում դիմել Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն՝ ուսանողին այլ ժամկետում վերականգնման համաձայնություն ստանալու համար»,- նշված է շրջաբերականում:

Շրջաբերականում նշվում է նաեւ, որ ուսանողների փոխհատուցման եւ աջակցության ծրագրերի մասին հավելյալ կտեղեկացվի:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՄԵԿՆԱՐԿԵՑ

ԴԱՍԸՆԹԱՑ՝ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության հետ համատեղ հոկտեմբերի 2-4-ը «Հայաստան. կրթություն, ժառանգության պահպանում եւ արժեւորում» ծրագրի շրջանակում անցկացնում են «Աղետների կառավարում» խորագրով վերապատրաստման դասընթաց-վարժանք՝ նախատեսված մշակութային կազմակերպությունների մասնագետների եւ արտակարգ իրավիճակների ծառայությունների համար:



ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների վարչության պետ Աստղիկ Մարաբյանը ողջունել է մասնակիցներին եւ նշել, որ ծրագրի իրականացման նպատակով Ֆրանսիայի ժառանգության ազգային ինստիտուտի եւ հայաստանյան թանգարանների եւ ժառանգության ոլորտում գործող կազմակերպությունների միջեւ տեղի են ունեցել բազմաթիվ հանդիպումներ, երկամյա քննարկումներ եւ բանակցություններ. «Արդյունքում այդ քննարկումներն ու բանակցությունները հանգեցրին երկու երկրների՝ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ մշակութային ժառանգության ոլորտում երկամյա համագործակցության: Ֆրանսիայի կառավարության կողմից շուրջ 600 հազար եվրո հատկացվեց մշակութային ժառանգության ոլորտում պահպանությանն ուղղված տարբեր միջոցառումների իրականացմանը: Նշյալ համագործակցության շրջանակում 2022 թվականից արդեն իսկ իրականացվել է 8 միջոցառում. սա արդեն 9-րդ հանդիպումն է: Առաջին շրջափուլում հատկապես մեծ ուշադրություն է դարձվել մշակութային ժառանգության վերականգնման ոլորտում տարբեր հանդիպումներին եւ վերապատրաստումներին, որի շրջանակում վերապատրաստվել է ավելի քան 100 վերականգնող-մասնագետ: Համագործակցության կարեւոր թիրախներից է աղետների կառավարման ոլորտում մեր թանգարանների աշխատակիցների վերապատրաստումն ու փորձի փոխանակումը: Այս համատեքստում մենք դեռեւս ամռանն անցկացրել ենք տեսական դասընթաց եւ ուրախ ենք, որ վերջին 5 ամիսների նախապատրաստական աշխատանքներն ու քննարկումներն այսօր գործնական հիմքի վրա են՝ հնարավորություն ընձեռելով փորձարկելու ստացած տեսական գիտելիքները: Մշակութային արժեքների պաշտպանությունը սկսվում է կանխարգելիչ աշխատանքներից, եւ այս դասընթաց-վարժանքը մենք կարեւորում ենք այդ տեսանկյունից»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դասընթաց-վարժանքը անցկացվում է Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում թանգարանային առարկաների, իսկ Հայաստանի ազգային գրադարանում՝ թղթային կրիչների պաշտպանության ուղղություններով:

2022 թ. հուլիսից մինչեւ 2023 թ. դեկտեմբեր իրականացվող ծրագիրը նպատակ ունի աջակցելու Հայաստանի մշակութային ժառանգության պահպանության գործընթացներին, ոլորտի մասնագետների կարողությունների զարգացմանը, ինչպես նաեւ թանգարանային քաղաքականության իրականացմանը եւ զարգացմանը:

«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Խաչիկ Հարությունյանի տեղեկացմամբ՝ «Աղետների կառավարում» խորագրով վերապատրաստման դասընթաց-վարժանքի շրջանակում Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրի տարածքում մուլյաժային առարկաներով ստեղծվել է միջավայր, որտեղ խաղարկվելու է ենթադրյալ հրդեհի սցենարը. «Այնուհետեւ տարհանված «առարկաները» կտեղափոխվեն այլ տարածք, որտեղ նախնական խնամքին առնչվող տեսական գիտելիքներ կփոխանցվեն ծրագրի մասնակիցներին: Ինչպես նախորդ դասընթացները, այդպես էլ այս դասընթաց-վարժանքը կարեւորվում է նրանով, որ ֆրանսիացի մեր գործընկերների հետ մենք իրականացնում ենք փորձի փոխանակում, ծանոթանում ենք եվրոպական լավագույն փորձերից մեկին, եւ եթե ունենք վերցնելու եւ տեղայնացնելու անհրաժեշտություն, ապա այդ ուղղությամբ պետք է աշխատել: Սա է դասընթացի հիմնանպատակը»:

ՀԵՏԱՔՐՔԻՐ

Women's club–Ը՝ ԱՄՆ–ԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթը օրեր առաջ գրել էր, որ Women's club-ի անձնակազմն այս օրերին գտնվում է ԱՄՆ-ում: Նախատեսված ներկայացումը չեղարկվել է: Դերասաններն էլ ունեն հստակ ժամանակացույց հետ գալու համար, ինքնաթիռի տոմսերն արդեն գնված են եւ փոփոխության ենթակա չեն:

Women's club-ի ո՛չ ղեկավար կազմը, ո՛չ դերասանները հանդես չէին եկել որեւէ հրապարակմամբ կամ հայտարարությամբ, սակայն, իրավիճակով պայմանավորված, նախատեսված ներկայացումը չի կայացել: Ամերիկայի մեր հայրենակիցներն էլ մտահոգ են, թե ինչ ճակատագիր են ունենալու գնված տոմսերը:

Ավելի ուշ դերասան Պոնչը (Տարոն Իսպիրյան) ինստագրամյան իր էջում տեսանյութ հրապարակեց՝ նախագծի անդամների մասնակցությամբ. «Ինչպես տեղյակ եք, մենք գտնվում ենք Լոս Անջելեսում, բայց շատ շուտով լինելու ենք Հայաստանում եւ կմիանանք Արցախից եկած մեր քույրերին եւ եղբայրներին օգնելու գործին: Ողջունում ենք մեր բոլոր գործընկերներին, որոնք արդեն անցել են աշխատանքի: Այո՛, մենք պետք է շարունակենք աշխատել, շարունակենք արարել, որպեսզի առաջ գնանք եւ ավելի ուժեղանանք: Սիրելի՛ արցախցիներ, պինդ կացեք, մենք ձեր կողքին ենք»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ ԱՄՈՒՍՆԱՑԱՎ

Դերասանուհի Անյա Թեյլոր-Ջոյը, որն առավել հայտնի է Netflix-ի հիթային՝ «Թագուհու քայլը» սերիալից, ամուսնացել է. հայտնում է Daily Mail-ը: Կայքի տեղեկություններով՝ դերասանուհու եւ նրա ընտրյալի՝ երաժիշտ Մալքոլմ Մքդաեի հարսանիքը տեղի է ունեցել հանգստյան օրերին Վենեցիայում:

Netflix-ի 27-ամյա աստղը, որը հայտնի է նաեւ Peaky Blinders եւ «Անցած գիշեր Սոհոյում» դրամաներից, հարսանիքին հյուրընկալել է մոտ 150 հյուրի, որոնց թվում էին Կարա Դելեւինը եւ Ջուլիա Գարները:

Օրվա սկզբին շիկահեր գեղեցկուհուն տեսել են պատշգամբում, որտեղ նա նախապատրաստական տրամադրությամբ էր՝ սպիտակ մետաքսե խալաթով եւ սուրճի բաժակը ձեռքին: Իսկ հարսանեկան զգեստը յուրահատուկ էր: Անյան կարապի տեսք ուներ իր երկար սպիտակ քողով, իսկ հանդերձանքը զարդարում էին թռչունների եւ ծաղիկների տեսքով բնապատկերներ:

ՍՊՈՐՏ

ՊԱՐՏՎԵՑԻՆ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ

Ռուսաստանցիներ Կարեն Խաչանովն ու Անդրեյ Ռուբլյովը չկարողացան դուրս գալ Չինաստանի մայրաքաղաք Պեկինում անցկացվող ATP-500 China Open մրցաշարի եզրափակիչ զուգախաղում: Կիսաեզրափակչում նրանք մրցեցին հոլանդացի Ուեսլի Կոլհովի եւ բրիտանացի Նիլ Սկուպսկիի հետ եւ պարտվեցին 6:7 (3:7), 2:6 հաշվով: Մրցախաղը տեւեց 1 ժամ եւ 17 րոպե:

ՌՈՆԱԼԴՈՒՆ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ Է

Սաուդյան Արաբիայի «Ալ Նասրի» 38-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն սոցիալական ցանցերում արած գրառումով մեկնաբանել է իր առաջին գոլը ասիական Չեմպիոնների լիգայում: «Ալ Նասրը» երկրորդ տուրում 3:1 հաշվով հաղթել էր Տաջիկստանի «Իստիկլոլին»:

«Ամբողջ թիմի գերազանց մրցելույթ: Ուրախ եմ առաջին գոլս խփել այս մրցաշարում: Մենք շարունակում ենք հաղթել»,- գրել է Ռոնալդուն:

Է խմբում «Ալ Նասրը» 6 միավորով առաջինն է: Հաջորդ տուրում սաուդյան թիմը հոկտեմբերի 24-ին կընդունի Քաթարի «Ալ Դուհաիլին»:

ԿՎԱՐԱՑԽԵԼԻԱՅԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Իտալիայի չեմպիոն «Նապոլիի» վրացի կիսապաշտպան Խվիչա Կվարացխելիան խոսել է Մադրիդի «Ռեալի» հետ առաջիկա դիմակայության մասին: Թիմերը կհանդիպեն Չեմպիոնների լիգայի խմբային փուլի երկրորդ տուրում:

«Ես մեծացել եմ՝ հետեւելով «Ռեալի» հանդիպումներին հեռուստացույցով: Հիմա այդ թիմն իմ մրցակիցն է խաղադաշտում, այն էլ՝ մեր ստադիոնում: Անհնար է երջանիկ չլինել այս երեկո:

«Նապոլին» հարգում է բոլոր մրցակիցներին, բայց ոչ մեկից չի վախենում»,- Կվարացխելիայի խոսքը մեջբերում է Goal.com-ը:

«Նապոլի» - «Ռեալ» հանդիպումը տեղի կունենա հոկտեմբերի 3-ին եւ կմեկնարկի Երեւանի ժամանակով 23:00-ին:

ԽՈՍՏՈՒՄ՝ ՄԵՍԻԻՆ

Ամերիկյան «Ինտեր Մայամիի» սեփականատեր Խորխե Մասը աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի 36-ամյա հարձակվող Լիոնել Մեսիին խոստացել է կազմակերպել հրաժեշտի հանդիպում «Բարսելոնայի» երկրպագուների հետ:

«Մեսիի հեռանալը «Բարսելոնայից» իր կամքով չէր: Նա չկարողացավ հրաժեշտ տալ կատալոնական ակումբի երկրպագուներին: Հանգամանքները չդասավորվեցին այնպես, ինչպես կցանկանար Մեսին:

Ես նրան խոստացել եմ, որ կանեմ հնարավոր ամեն ինչ առաջիկա տարիներին Բարսելոնայում նրա հրաժեշտի հանդիպումը կազմակերպելու համար»,- Մասի խոսքը մեջբերում է Marca-ն:

Մեսիի պայմանագիրն «Ինտեր Մայամիի» հետ նախատեսված է մինչեւ 2025 թվական:

● *Հոկտեմբերի 5-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սիրելիներից մի՛ բաժանվեք» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ ժամկետներում եւ ի՞նչ պարբերականությամբ է ներկայացվում գիտական աստիճանի համար հատկացվող ֆինանսավորման հայտը:

Լենա Ստեփանյան (39 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ծրագրեր իրականացնող կազմակերպությունները յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչեւ 20-ը կոմիտեի orgs.scs.am առցանց համակարգ մուտք են անում յուրաքանչյուր ամսվա համար ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողների տվյալները եւ դրանց հիման վրա ձեւավորված եռամսյակային հաշվետվությունը յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչեւ 30-ը ներկայացնում են կոմիտե: Թեմաներ իրականացնող կազմակերպությունները յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա մինչեւ 30-ը կոմիտե են ներկայացնում հաշվետվություն՝ թղթային տարբերակով: Տարվա վերջին եռամսյակի առցանց հաշվետվությունը ներկայացվում է մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 7-ը, իսկ թղթայինը՝ մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 10-ը:

Բարձրագույն կրթության եւ գիտության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշվետու եռամսյակի հաշվետվությունը չներկայացնելու դեպքում հաշվի է առնվում նախորդ ներկայացված տեղեկատվությունը՝ անկախ չներկայացման պատճառներից:

ՄԻԳՐԱՑԻԱ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կազմակերպվում օտարալեզու ապաստան հայցողի եւ միգրացիոն ծառայության աշխատակիցների հաղորդակցությունը:

Անդրե Հովհաննիսյան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստան հայցողի ցանկությամբ հարցազրույցն անցկացվում է իր նախընտրած սեռի աշխատակցի կողմից: Եթե ապաստան հայցողը հայերեն չի խոսում, ապա հարցազրույցը կանցկացվի ՄԾ-ի կողմից հրավիրված՝ ապաստան հայցողի նախընտրած սեռի թարգմանչի մասնակցությամբ:

ՀՀ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Միգրացիոն ծառայության համաձայնությամբ՝ապաստան հայցողը նաեւ կարող է ներկայացնել թարգմանիչ իր սեփական ընտրությամբ եւ սեփական միջոցներով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Ազգային ժողովում կրկին քարուքանդ վիճակ է:

«Ժողովուրդ» օրաթերթի ֆոտոխցիկը ֆիքսել է, որ ԱԺ միջանցքներում գրեթե ամենուր, կարելի է տեսնել շինարարական պարագաներ, թափթփված վիճակ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Շիրակ	+ 2 + 5 / +10 + 14
Կոտայքի լեռներ	+ 2 + 7 / +10 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 7 + 12 / +13 + 15
Գեղարքունիք	+ 3 + 6 / + 8 + 12
Լոռի	+ 8 + 10 / +12 + 15
Տավուշ	+ 9 + 13 / +14 + 19
Արագածոտնի լեռներ	+ 1 + 4 / + 8 + 11
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 10 / + 12 + 15
Արարատ	+11 + 13 / +15 + 17
Արմավիր	+10 + 14 / +16 + 18
Վայոց ձորի լեռներ	+ 3 + 6 / +7 + 9
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 11 / +15 + 18
Սյունիքի հովիտներ	+12 + 16 / +16 + 19
Սյունիքի նախալեռներ	+ 6 + 10 / +10 + 13
ԼՂՀ	+ 9 + 12 / +14 + 18
Երեւան	+10 + 12 / +17 + 19

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*